

գրուածքի տպագրութեամբ: Պատրաստուած են և ի նկատի կան հրատարակութեան համար նաև հետեւեալ գրուածքները. Զ. Ս. Միլլ— Կանանց ստորագրութեան մասին. Տօկվիլ— Հին կարգ. Վոլտեր— Կանգիդա —

Ինչպէս տեսնում ենք ընտրութիւնը և ձեռնարկութեան նպատակը ըստ ամենայնի արժանի է գովութեան, բայց թարգմանիչը իւր ձեռնարկութեան համար «հրաւիրում է մեր ընթերցող հասարակութեան բարեհաճ... անշակցութիւնը»:

Թող ներէ նա մեզ, մենք խորհուրդ չենք տայ անշակցել մանաւանդ դատական զրքերի այնպիսի թարգմանութեան, որի զարհուրելի օրինակը մեր առջեւ է:

Բաց արեք այս դասական թարգմանութեան առաջին պատահած երեսը և փորձեցէք ձեր բոլոր սրամտութեամբ մօտաւորապէս հասկանալ, թէ ինչ է կամեցել ասել Պարոնը իւր քրտնաթոր աշխատութեամբ, զոր օրհասեալը. «Ձեռն գտնուի երկու այնպիսի դարեր, և հազիւ թէ գտնուին երկու այնպիսի երկրներ, որոնք զձեռք լինէին այս հարցը միատեսակ: Այդ դեռ բաւական չէ, մի դարի վճիռը սովորաբար դառնում է զարմանքի առարկայ միւս դարի համար, և նմանապէս մի երկրի վճիռը՝ միւսի համար: (Այս դեռ Աստծու օրհնութիւն էր, դուք շարունակութիւնը լսեցէ՛ք...) Այն ինչ եթէ մենք կանգ առնենք որոշ շրջանի և երկրի մարդկանց յարաբերութեան վերայ դէպի այս հարցը, ապա մենք կը նկատենք, որ այդ հարցը զձեռք նրանց համար այնքան քիչ դժուարութիւններ էր ներկայացնում, որ կարծես թէ նա հարց էլ չէր, այլ միանգամ ընդ միշտ մարդկութիւնից զձեռք մի բան: Նրանց մէջ տիրապետող կանոնները թրւում էին նրանց անկասկածելի և անխոյտնի ինքն ըստ ինքեան. այս համարեա ընդհանուր ցնորքը ներկայացնում է սովորութեան մոգական ազդեցութիւն ունենալու այն օրինակներից մէկը, որը ոչ միայն ինչպէս ասում է առածը, երկրորդ բնութիւն է, այլ մշտապէս սխալ կերպով ընդունում է իրրեւ առաջին բնութիւն: Սովորութեան ազդեցութիւնը հեռացնում է մարդկանցից ամեն մի կասկած վարուեցողութեան տիրապետող կանոնների անփո-

փոխելութեան մասին և այս ազդեցութիւնը ևս առաւել զօրեղ է նրանով, որ մարդիկ սովորաբար կարիք չեն զգում որ և է ապացոյցի այդ կանոնների ճշմարտութեան մէջ համոզուելու կամ ուրիշների առաջ արդարացնելու: Այն բաներում որոնց սովորաբար վերաբերում են այս կանոնները, մեր սեփական զգացմունքների վրակայութիւնը փոխարինում է ամեն տեսակ ապացոյց և դարձնում է բոլոր ապացոյցները անօգուտ— այսպէս է ընդհանրացած կարծիքը, որը պաշտպանում են նոյն իսկ այնպիսի մարդիկ, որոնք փիլիսոփայ կոչուելու յատկանութիւն ունին»:

Ով որ այս բառերի դէպերից մի դանդի չափ իմաստ կարող է քաղել, նա պարտաւոր է... անշակցել մեր Պարոնի ձեռնարկութեան, որ նորահետի միասին՝ անթառամ պսակի արժանանայ— մեր գրականութիւնը չինքնէնով ճոխացնելու պատուի համար:

Իսկ մեր համեստ կարծիքն այն է, որ Միլլի Ազատութեան մասին» պատուական զիրքը պէտք է նոր ինորոյ թարգմանութեան միւս խոստացած նոյնպէս պատուական զրքերի թարգմանութիւնը աւելի ձեռնհաս գրչով կատարուի:

Մենք այսպէս խիստ խօսեցինք, որպէս զի հրատարակիչների գեղեցիկ դիտաւորութիւնը (մինչև իսկ թուղթն ու տպագրութիւնը) քամուն տուած չլինին: Եւ թող նոքա համոզուած լինին, թէ մեր արեւելեան բարբառի վիճակը այդքան էլ յուսահատական չէ:

Ս. Մ



ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆԵ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ հայոց լեզուի, գրականութեան և պատմութեան մասին. հայկաբանի մի պատկերով և կենսագրութեան նիւթերով. Էմինեան Ազգագրական հրատարակութիւնների IV հատոր, խմբագրութեամբ Գր. Խաչաթեանցի. 1898 թ., Մոսկուա:

Յարեք չկայ Մկրտիչ Էմինի երկասիրութեանց հրատարակութեան մեծ նշանակութիւնը ներբողելու, երբ որ նա իւր գլուխ գործոց— Աէպք հնոյն Հայաստանի— 1850 թ. տպագրեց, այս խօսքով

սկսեց իւր հետազոտութիւնները. «Առ մեզ չիք պատմութիւն Գրականութեան», որով այն ճշմարտութիւնը յայտնեց, թէ ինքն է հանդիսանում մեր ուսումնական գրականութեան առաջին ուսուցիչներէից մէկը, եւ իրօք, ինչ որ նա իւրոյս ընծայեց, միշտ ինքնուրոյն գիւտերի արդիւնքներ էին, այնպէս որ մինչ ցայսօր նորա ասածները կշիռ ունին բանասէրների աչքում, որքան որ իրանից յետոյ հետազոտութիւնները աւելի յառաջագրիմած եւ ճշգրտած համարուին:

Այս հատորի առաջին երեսներում ղեկեղուած են «Հատուածք ի դասախօսութեանց ճարտասանութեան», որ հանգուցեալ հայկարանը աւանդել է Լազարեանց ճեմարանում 1840—1850 թուերին եւ որ առաջին անգամ են տպագրուում, Խմբագիրը կարծես թէ արդարացնել է ուղում հանգուցեալին, որ սա անսասանութեամբ է զբաղուել, եւ շտապում է Էմիլի գործը անուանել գրականութեան տեսութեան, որպէս զի մեր ընթերցողների ականջին աւելի դիւրաւոր անուն հնչեցնէ, քան սխալակալ «Ճարտասանութիւն» բառը: Սակայն դուր է այս ջանքը, Գասախօսութեանց նիւթն է «Կենդանի խօսք, կենդանի ասութիւն», եւ ոչ թէ անոր մի մասնաւոր գործածութիւն—զիրա, հետեւապէս չի կարող կոչուիլ «տեսութիւն գրականութեան», նոյն իսկ ուսնները չեն անուանում «տեսութիւն գրականութեան» (теория литературы) այլ «տեսութիւն բանի» (словесности), որ հայերէն շատ գեղեցիկ կերպով արտայայտուում է «Ճարտասանութիւն» բառով, Իսկ թէ հանգուցեալ հայկարանը իւր ժամանակին ինչպէս է զգուշացել սքոլաստիքութիւնից, այդ արդէն ինքը գրուածքը վկայում է, որ նոյն իսկ խմբագիրն էլ իրաւամբ շեշտում է: Վար ժամանակ, որ ամենայն ուսմունք վատ էր աւանդուում ի թիւս որոց նաեւ ճարտասանութիւնն ու տրամարանութիւնը, որոնք մեր երեսուսած ականջին այժմ խորթ են հնչում: Բայց յետոյ բոլոր ուսմունքների աւանդութիւնը շատ ու քիչ կատարելագործուեցաւ, իսկ ճարտասանութիւնն ու տրամարանութիւնը շարունակում էին տաղաւորել լինել եւ «սքոլաստիք» անուն կրել: Մի որ Ռուսաստանում Զոն Ստիւարտ Միլլի հրապուրով տրամարանութեան նորասիրութիւն արծարծուեցաւ, իսկ ճարտասանութիւնը դարձեալ անշքութեան մէջ մնաց, Իրեւն այսպէս պիտի բացատրուի, որ խմբագիրը հարկ է համարել հանգուցեալին արդարացնել մեր «աւելի խելօք» բանասէրների աչքում: Սակայն Էմիլի այս հատուկորեն կարելի է բացայայտ տեսնել, որ նա լաւ գործ էր սկսել, նախ եւ առաջ Ռ. Պատկանեանի վկայութիւնն ունինք, թէ Էմիլի աշակերտները որչափ օգուտ են քաղել այդ դասերից:

Էմիլի իւր թերթերը այնպիսի ժամանակում

եւ այնպէս համառօտ է գրել, որ այժմ անոնք աւելի պատմական նշանակութիւն ունին, Բայց լեզուի կողմից խիստ խրատական են—նոյն իսկ այժմ, Յայտնի է, որ մերոնք շատ դժուարանում են վերացական եւ փիլիսոփայական մտքեր արտայայտել—հայերէն բանակարգութեամբ, այնպէս որ նոցանից իւրաքանչիւրը՝ Է. Էքսպիրի հերոսի պէս երկուքի մէջ լինելով՝ կարծես թէ բացականչել է ուղում. «Ահ, գլխիս մէջ շատ իդէաներ կան, բայց ափսոս որ հայոց լեզուն աղքատ է», Թող նորա այդ թերթերը լաւ ուսումնասիրեն, որպէս զի համոզուին, թէ լեզուն բնաւ աղքատ չէ, այլ տգիտութիւնն է մեր աղքատութեան պատճառը:

Ով որ տրամարանութեան սէր ունի, նա այդ թերթերի մէջ մի լաւ հրահանգ կը գտնէ: Անձանօթ բան չէ, թէ ինչու մեծ մասով տրամարանութեան ուսումը ձանձրալի եւ անպատշաճ է դառնում: Մեր կենդանի-խօսակցական եւ գրաւոր-շարագրական լեզուն ընդ միշտ եօթը կողպէքներով փակած է մնում, մինչեւ որ աշակերտը չոր ու ցամաք հասարանութիւնների ուսումը այնպէս է ծամ ծմում, որ չի կարողանում ըմբռնել, թէ արդեօք ինչ կամրջով կարելի է հաւաքարանութիւններից մուտք գործել կենդանի լեզուի մէջ, եւ այդ այդպէս էլ կը լինի մինչեւ որ տրամարանութեան գործնական պարապմունքները գլխէ ի գլուխ չը փոխուին: Արդ հանգուցեալ հայկարանը հարեանցի կերպով՝ բայց եւ հրահանգիչ կերպով՝ ցոյց է տալիս «համապատասխան զրուցատրութեանց» եւ «հաւաքարանական ուսման» սերտ կապը:

Էմիլի անտիպ գրուածքներից այս հատորում մտել է այլեւ «Զենոր Գլակ», Ինչպէս յայտնի է, այս հեղինակը պատմում է Հայաստան մտած Հրե-գիկների գաղթականութիւնը, որ մեր ուրիշ հեղինակներից ոչ ոք չի յիշատակում: Արեւմտեան բանասէրները այդ պատմութիւնը անստոյգ են համարում, իսկ ամբողջ պատմութիւնը առասպել են կոչում: Մեր հեղինակը այդ խնդիրը չզարթեցնելով՝ ուսումնասիրում է գրքի բովանդակութիւնը, անոր երեւելի յիշատակութիւնները, հեղինակի նկարագրութեանց գեղեցկութիւնը եւ ոճը:—Գաղթականների հետ մեր ազգի մէջ մտած սովորութիւններից մէկն է «զաճեցուցանել զգէսս», ճարօն գաւառի զիւղօրէից անուանակոչութիւնը (զոր օր. Բուզու) եւ Գիսանեսի անունը, որ գիսաւոր է նշանակում—նշեկաց բառեր են (սանսկրիտ գիսա, հեր, ծամ), որ եւ մեր լեզուի մէջ մտել են, Հայաստանի առաջին քրիստոնէից խաղաղական բարքը փայլում է առհասարակ միւս խուժաղուժ ժողովրդեան մէջ, Այս ծակամուտ լեռնախոյզ սրբերը միմեանց հանդիպելով՝ մինն ասում է. «Բարի եկար», ծանապարհորդ խաղաղութեան, իսկ միւսը. «Բարեօք գտաք զձեզ օթեանք սրբոյ Հոգւոյն եւ ճրագք լուսոյ»:

աւետիք ձեզ, զի սատանայ կործանեցաւ, և Աստուած այսօր կրկին ուրախութեամբ լցոյց զարարածս իջմամբ սուրբ Հոգւոյն: Այս խաղաղական բարքի հակառակն է կաղմում ժամանակի բիրտ և բարբարոս մարդկանց կենդանագիրը: մանաւանդ այդ բանը լաւ պարզվում է Տրդատի և Գեղանհանի մենամարտութեան նկարագրութեամբ: որ իւր զիւցազնական ոճով Հոմերի Եղիականն է յիշեցնում: Արժանի է ուշադրութեան Զենորի տեղագրութեան ճշգրտութիւնը, որ 15 դար անցնելուց յետոյ, Ճանապարհորդների խօսքով, նոյն իսկ այսօր ստուգվում է:—

Անտիպ գրուածքներից կրորդն է «Թովհան Մամիկոնեան», Էմինը այս հեղինակի մատենագրութեան մէջ դարձեալ նկատում է ժամանակի մարդկանց բարքի նկարագրութիւնը, և ոչ այսքան միայն, այլ և թէ ինչ ծաշակ ունէր նոյն իսկ մատենագիրը, «որ խժական բերմամբ իւրովք ոչ իւրիք զանազանի յարիւնականն ի մարդակերպ գազանաց, զորոց ահացուցիչ իմն ճշտութեամբ և աղբութեամբ առաջի առնէ մեզ զգործս... արի բնակչաց Տարոնոյ, որք սաստկութեամբ, խստութեամբ և բրտութեամբ իւրեանց կարծել տան մեզ, ոչ լինել արանցս այսոցիկ քրիստոնեայս: Եր պատերազմի մէջ Մուշեղեան Սմբատը մեծամեծ նախաճիւղներ գործելուց յետոյ՝ իւր ձեռքում խորտակուած տեսաւ իւր սուրբ... քանզի յարիւն գոլով թաթաւեալ՝ մածաւ սուրն ի ձեռին Սմբատայ և ոչ կարաց հանել. քանզի մածեաւ արիւնն ընդ սուրն և ընդ ձեռնատեղին, և կոտրեցաւ. Եւ իւրե տեսին պարսիկքն, եթէ ոչ կարաց առնուլ այլ սուր, ձայն տուեալ ասէին ցմիմեանս. փութասջիւր, զի մածեալ է ձեռն քաջին, և կապեաց զնա սատուածն իւր, և սուրն ի ձեռին կոտորեալ է. Եւ պատեցին զնա բազումք, և իւրե զփայտ չոր, որ ի ձեղքին ճարձատէ, այնպէս ճարձատէին ի վերայ գլխոյն Սմբատայ գէնը: Իսկ նա բարձր ձայնիւ ասէր. Վա՛յ քաջութեանդ ձերոյ, զի ոչ կարացէք հերձուլ զգլուխ իմ... Բայց իւրե գիտաց, եթէ կարի սաստկացան ի վերայ նորա, ձայն բարձեալ ասէ. Մէր ես բազումք քաջ և մորձ հզօր ընդգէմ թշնամեաց, գաւազան իմի՛ ձերութեանս, իշխան Պալուռեաց, յառաջ մատիւր՝ որպէս քաջ արծուի, զի անգեղք և բուէճք պատեցին զիս... Եւ ինքն քաջաբար որպէս արծուի՝ կանչեալ զիմեաց ի վերայ... և հասեալ ի թիկունս Սմբատայ և բախեալ զտէգն ի վերայ պարսիկն թիկունս և անգէն եհան ընդ ողն երկվարին, և այլ ոչ ժամանեաց հանել զտէգն: Զոր ծաղր արարեալ ասէր. երթ չափեա՛ զտէգր, թէ քանի կանգուն է. Իսկ Սմբատայ ելեալ յեղր պատերազմին, և ձախ ձեռամբ պրկեաց պարսիկ մի, և ետ գնուլ ի վերայ մեռիւն և սոյնի, զի իջցի քեմ արիւնն ևս քույսցոյցի գրանատեղն:»

Էմինը սարսափում է, որ Մամիկոնեանն այս խօսքերը անխռով հոգւով մէկ մէկու յետեւից շարում է, իբր թէ սովորական բաների մասին է ճառում: «Որպէս գործքս են ահացուցիչք, աւելացնում է նա, նոյն և գործողք՝ ի սպարապետն սկսեալ մինչև ցլետին զօրականն, որք և զոգցես մերկացեալ են զիւրեանց մարդկութիւն և մերժեալ բնաւին զգութ և սէր առ մերձաւորս ի սրտէ... Սակաւ ուրեք գտցես օրինակ խստասրտութեան և անզգայութեան, որ զանցանիցէ զորով առ Թովհանեաւ եպիսկոպոսին տեսանեմք: Խոսովի հոգի մեր յրեմանունն զսոսկալին զայն նկարագրութիւն, յորում սպարապետն Սմբատ ձախ ձեռամբ պրկեալ զպարսիկն՝ զենուլ տայ զնա ի վերոյ սրոյն ի ձեռին մածելոյ, զի իջցի քեմ արիւնն ևս քույսցոյցի գրանատեղն: Ողջոյն Պատմութիւն մատենագրիս ի սոսկալի իրացս երեւի շարակարգեալ. քանզի փոխանակ ասելոյ եթէ յայս ինչ պատերազմի ի պարսկաց չորս հազար այր գտան սպանեալք, ասէ. Մեալ գօրացն ի տուս զորս ևս զսիմ Պարսիկս լիզուա՛ւ՝ սասակիկն, և գիրքն կտեալ՝ ի շարի արկանիկն ևս քերիկն առ Սմբատ: Եւ համարեալ գիրքն՝ գաւնիկն սպանեալ պարսիկ՝ ընդ այր, ընդ կիկ ևս ընդ մանկք՝ չարիկ հազար:—Եւ յայլում վարի. Արարեալ համար յաւառ յայնմի՛՝ գնն գրոյն վեց հազար՝ սպիտաւ երկու: Եւ հրամայեաց գաւնեցուն գիրքն կտեալ ևս զքրիստոնէս, ևս արկանիկ ի մախալ:»

Էմինին աւելի այն է զարմացնում, որ հեղինակը չի շատանում սոսկ իրողութիւնները պատմելով, այլ հաղորդում է նաև մերայինների այլապանումն ու ծաղրը, որով Պարսից զօրքի մէջ սպանութիւններն ու արիւնահեղութիւնները կատարուել են: Այսպէս պատերազմի ժամանակ մի պարսիկ ձի հեծաւ և սկսեց փախչել. «զորոյ զհետ մտեալ երկուց ոմանց, ասէ մատենագիրն, և յայնկոյս գետոյն ջախսեցին զգլուխ նորա, և ուղեղն ընդ քիթն իջանէր: Եւ միւս ընկերին առեալ աւաղ՝ մատուցանէր աւաղ և ասէր. Պարսից խորտկարար առ զայր: Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնոր՝ կառաշ: Այսպէս են անում սոսկականները. այժմ տեսներք, թէ ինչ է գործում Վահան սպարապետը հիւանդ Միհրանի հետ. Վահան հրամայեաց ծառայից իւրոց ծաշ առնել և զՄիհրան կոչել... Եւ Վահանայ առեալ զմախաղն, ուր քիթքն և թլփաթքն կային՝ ետ բերել առաջի իւր, Իսկ նա զարհուրեալ ասէ. Զինչ է այդ, զորոց տուր ինձ:—Եւ նա կարգաւ պատմեաց նմա ստուգիւ, և մի բան ոչ թագուցեալ զոր ինչ արարեալն, Իսկ նորա բարկացեալ՝ առեալ զտէգն ի ձեռանէ ծառային կամէր հարկանել զՎահան: Եւ նորա ձգեալ զձեռն իւր ի սուրն, որ առաջի կայր, կտրեաց զթլփաթն նորա և եղ ի բերան նորա և ասէ. Գու ես, որ թշնամանէիր զաստուած, և զկրօնաւորսն իմ՝ զսիւնն աշխարհի, սպանանել տայիր, Եւ կտրեաց

զքիթման և ցուցանէր աշացն, և պատառեալ զփորն
եւ ծառային հանել զկարգն և զնել ի բերանն.
և հարեալ զգանական ի փորն՝ և եւ թողուլ ի ցիցս.
Այս տեղ էմինը աւելացնում է. եւ ուր իցէ ար-
գեօք մարդասիրութիւնն այն զոր 350 ամօք նախ
քան զայս հրեշտականման այրն այն Գրիգոր քա-
րողէր ի Յարօն դաւաթի. ուր հետեանք նորայն
քարոզութեան. Այ միայն յարս յաշխարհական
կարգի ոչ տեսանմք զայն, այլ և ոչ՝ յորս զԲրիս-
տոս պատարագեն. Բանդի արգարե հեղինակ Պատ-
մութեանս՝ եպիսկոպոսն Յովհանն ի հաղորդելն
մեզ զքստման յուցիչ զիրս զայսոսիկ, ոչ միայն ոչ
աւաղէ զգործս անգութ իւրոց ժամանակցաց. այլ
ընդհակառակն մտադիւրութեամբ իմն գուն գործէ
ի մի համաժողովել զարհաւիրքս զայսոսիկ, ընդ
որ ինքն անխռով հայէր աշօք...

Աւրիշ տեղում Մամիկոնեանը ցոյց է տալիս,
թէ ըստ պահանջման ժամանակի ժողովրդեան մէջ
ինչպէս են ծնուել ազգային երգերը. Պարսկական
գունդը յաղթելուց յետոյ՝ Վահանը իջեանց
Կենաց վայր կոչուած գիւղը. ընդ առաջ եկան
պարաւորները և ամէն տեսակ երգերով զօմե-
ցին. Որոնք յետոյ՝ երբ որ գիականերն սկսեցին
հոտել և որդենել, շէր (կրգ) հանելով՝ ասում էին.

Կերան գազանք զմարմինս դիականցն Վարադայ
և գիրացան.

Կուզ կերեալ, ուռաւ որպէս արջ.

Եւ աղուէս հպարտ եղև քան զառիւծ.

Գայլ՝ քանզի շատակեր էր, պայթեաց.

Եւ արջ, քանզի զոր ուտէն, չմնայ առ ինքն,
ի սովոյ մեռաւ.

Անգեղք՝ քանզի ագահք էին՝ նստան և այլ
ոչ կարացին վերանալ.

Մկունք՝ քանզի շատ կրեցին ի ծակս, ոտքն
մաշեցան.

Անտիպ գրուածքներից չորրորդն է «Գողթման
երգն»—ի Բանասեր օրագրին, ուր հանգուցեալ
գիտնականը ցոյց է տալիս այդ երգի կեղծութիւ-
նը: Ապա գալիս են կրկին տպագրութիւնները—
«Վէպք հնչյն Հայաստանի» (առաջին անգամ տպա-
գրուած 1850 թ.), «Վաղար Փարպեցի» (նախեր-
գանք Փարպեցւոյ թղթոյն տպ. 1853 թ.), Յով-
հանէս Վաթուղիկոս պատմաբան. (նախերգանք նորին
Պատմութեան տպ. 1853 թ.), Սղբա յայտնի
գրուածքներ են, որոնք մինչ ցայսօր չեն կորցրել
իրանց ուսումնական մեծ կարեւորութիւնը.

IV հատորի յաւելուածում մտել են «Ռ. Պատ-
կանեանի յիշողութիւններ պ. Մ. Էմինի մասին» *)

*) Կարևոր ենք դասում ծանոցանել հետեւեալը.
Հանգուցեալ Էմինից 1858 թ. Լազարեան ձեռագրում

և ապա—զանազան կոնդաններ և նամակներ. Այս
նամակներից մենք առաջ ենք բերում՝ հայագետ
Պետերման գերմանացու հայերէն գրած թուղթը,
իրեն գերմանական ջանասէր քրտանց օրինակ՝ գեր-
մանական մտածողութեան որոշ գրողով.

Ազնուական եւ պատուելի վարժապետին Պարոն Ամրնոյ
ողջունել սիրոյ ինդաւ.

Երեսցէ ինձ Տէրութիւնդ՝ եթէ ես այր օտարադ-
գի եւ Ձեզ անծանօթ իշխեմ՝ դրել թուղթ մի առ Ձեզ.
բայց ընդերկար իսկ է՝ զի կամեցայ զայս առնել, քանզի
մեք երկուքին կաղեալ էաք մտերիմ մի բարեկամ՝ զՅով-
հանէսեան բժիշկ՝ զորոյ զմահն կանխահաս մեք ողբամք.
Յայտմանէ ես բազում անգամ եւ այնչափ բարի լուսայ
զԶէնջ՝ զի յայնմ Հեռէ յոյժ փափագեցայ գտնէ ի ձեռն
թղթոյ ձանաչել զՏէրութիւնդ.

Բարեկամ մեր պատմեաց ինձ՝ զի Տէրութիւնդ Ձեք
ի միտս կալաւ դրել եւ տպագրեցուցանել զպատմութիւն
Հայկական եկեղեցւոյդ. եւ յանդգնեմ հարցանել զԶէնջ՝
թէ երեսցան այդ գիրքդ՝ եւ ուր տպագրեալ է. Միտ-
գամայն առնում զայս առիթ յանձն առնել Ձեզ զաղ-
գակեցն Ձեք երիտասարդ, որ առտ ի Գերմանիայ պա-
րապեաց յուսումն. եւ այժմ՝ պատրաստ է դառնալ
ի հայերնի դաւառան առ յուսուցանել ազգակցացն իւր,
զոր ինչ ուսեալ իցէ. եւ աղաչեմ եւս զՁեզ՝ զի յինէն
ողջոյն սիրոյ սայցէք Peter Kumanin պարոնին.

Խնդրութիւն մեծ զգամ յանձն. զի այս լինի իւր
պատրուակ առ ի կարող լինելոյ հաղորդութիւն թղթոց
ունել ընդ Ձեզ, եւ առ ի տալ պատճառս վկայելոյ Ձեզ
լինել Տէրութեանդ Ձերում.

Կաթագին Ծառայ

H. Petermann Dr.

Վարժապետ յիսուսմարտի Բերլինոյ.

Ի Բ Ե Լ Ի Ն

12 Ապ. [18]30.

Ի վերջոյ աւելորդ չենք համարում յիշատա-
կել, որ այս չորրորդ հատորով վերջանում է Էմինի
գրուածքների հրատարակութեան շարքը. այսու-
հետեւ Յանձնաժողովը պիտի ձեռնարկէ հայ ազգա-
դասին ժողովածուների հրատարակութիւնը, որին վերա-
բերելիք մասնաւոր տեղեկութիւններն ու աշխա-
տակցութեան պայմանները՝ առանձին յայտարա-
րութեամբ պիտի ծանուցանուի Յանձնաժողովի
կողմից ի գիտութիւն հասարակութեան.

Ս. Ս.

յսեղ ենք, որ եւ Մասկուսի համալսարան մեկնիս պար-
տաւորում է կղել մի շարադրութիւն գրելու, որի համար
նիւր է ընտել իւր ամապարհորդութիւնը. Հեղկաստանից
եւրոպայով դիպի Մասկուս, որ եւ մանրամասն տեղե-
կութիւններ է տուել իւր կենաց մասին. Շարադրութիւնը
եւ ուսերեկի հմտութիւնը այնպէս զովելի է եղի, որ
համալսարանական խորհուրդը արժան է դասել հեղինակի
մեռացիւր օգուտը պահպանելու համարումն ի
գրադարանի մէջ:—Արեւոյ պահպանուածը անկործան
է մնացի: